ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1530: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

# Սյունյաց երկիր

ՇԱԲԱԹ, 2 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2017Թ.
№ 30 (448)
www.syuniacyerkir.am

*Ճանաչել իմաստությունն ու խրատը, իմանալ հանճարի խօսքերը...*

*Սողոմոնի առակներից*

## ՀԱՄԼԵՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ. «Տիգրանակերտի հուշարձանն արժանի չէ նման վերաբերմունքի»

Հունիսի 27-ին Արցախի Հանրապետություն կատարած հերթական այցելության ընթացքում հանդիպեցինք Արցախի հնագիտական արշավախմբի ղեկավար, ԵՊՀ պատմության ֆակուլտետի մշակութաբանության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Պետրոսյանի հետ, ում հետ զրուցեցինք Արցախի Տիգրանակերտի հայտնաբերման, ուսումնասիրության, կատարվող աշխատանքների եւ մի շարք այլ հարցերի վերաբերյալ: Ինչպես տեղեկացրեց Համլետ Պետրոսյանը, գիտական հիմնական հետաքրքրությունը հայ քրիստոնեական մշակույթն է, նրա զանազան դրսեւորումները, զբաղվել է խաչքարային մշակույթի, միջնադարյան բնակավայրերի, աշխարհընկալման, ինքնության դրսեւորման, ներկայումս՝ զբաղվում է կոնկրետ Արցախի, մասնավորապես Տիգրանակերտի ուսումնասիրության խնդիրներով:

էջ 6

## Իսկ մենք չէինք հավատում վարչապետի խոսքին, որ Սյունիքը մի օր Իսրայել է դառնալու

Օգոստոսի երկրորդ տասնօրյակում Հայաստանի մի քանի վայրերում սկիզբ առած հրդեհներն, իրոք, աննախադեպ էին մեր հանրապետությունում: Ուստի եւ շատ հարցեր ու խնդիրներ ջրի երես դուրս եկան: Պարզվեց հատկապես, որ մեր փրկարարների հիրավի հերոսական պահվածքը որեւէ արդյունք չի տա, եթե լեռնային պայմաններին համապատասխան տեխնիկական միջոցներ չկիրառվեն: Հատկապես ինքնաթիռի, ուղղաթիռների կարիք էր զգացվում: Փա՜ռք Աստծո, Ռուսաստանի Դաշնությունն ինքնաթիռով օգնեց եւ կարողացանք զերծ մնալ ավելի մեծ հետեւանքներից...

Ամբողջ հանրապետության համար լարված այդ օրերին (արձակուրդից վերադարձած նախագահը նույնպես լծվեց այդ գործին) փրկարարները հատկապես ինքնաթիռի եւ ուղղաթիռների կարիք էին զգում, այլ կերպ հնարավոր չէր կանգնեցնել հրդեհի գրոհը...

Մինչդեռ օգոստոսի 16-ին Կապանի երկնակամարում երեւաց ինչ-որ թռչող սարք (մոտ 20 օր նման ապարատ չէր երեւացել այս կողմերի հորիզոնում): Պարզվեց, որ Սյունիքի մարզպետին սպասարկող ուղղաթիռն է՝ մարդն աշխատանքի է գալիս:

Ուղղաթիռը վայրէջք կատարեց Կապանի օդակայանում եւ մնաց այնտեղ 2-3 օր. մարզպետը պետք է նույն այդ սարքի միջոցով տուն վերադառնար:

Առաջին իսկ հայացքից դա երկրի հետ, երկրի խնդիրների հետ որեւէ կապ չունեցող ինչ-որ մարդու պահվածք է: Մյուս կողմից՝ իրեն թույլ են տվել, ինքն էլ օգտվում է ուղղաթիռի ծառայությունից: Այլ հարց է, թե ինչո՞ւ են թույլ տվել:

Ուղղաթիռով աշխատանքի գնալ-գալը միգուցե եւ քննարկման առարկա չդառնար այսքան սրությամբ, եթե չլիներ մեկ-երկու հանգամանք:

էջ 4

## ՀՀ մշակույթի նախարարը Սյունիքի մարզում

Աշխատանքային այցով օգոստոսի 26-ին եւ 27-ին Սյունիքի մարզում էր ՀՀ մշակույթի նախարար Արմեն Ամիրյանը՝ աշխատակազմի ղեկավար Սամվել Մուրադյանի հետ: Մարզկենտրոն Կապանում նախարարը նախ՝ այցելեց Սյունիքի մարզային գրադարան, եղավ գրադարանի բաժիններում (սպասարկման, մանկական, արվեստի, մատենագիտության), հետաքրքրվեց գրքային ֆոնդի համալրմամբ, ընթերցողների հաճախելիությամբ: Այնուհետեւ Ա.Ամիրյանն այցելեց Հայաստանի ժամանակակից արվեստի թանգարանի Կապանի մասնաճյուղ, ծանոթացավ ցուցադրանքին, շենքային պայմաններին: Մասնաճյուղի տնօրեն Բորիկ Մինասյանի հետ քննարկեց հարցը, թե ինչ անել, որ մշակութային օջախն ավելի հասանելի լինի այցելուներին: Նախարարը գոհ էր ցուցանմուշների պահպանման դրվածքից, բայց նաեւ նկատեց, որ մասնաճյուղի անվտանգությունն ապահովելու, ինչպես նաեւ ընթացիկ նորոգումներ անելու խնդիրներ կան, որոնք պիտի քննարկի Սյունիքի մարզպետի հետ: Մինչ Կապան այցելելը նախարարը եղել էր Խնձորեսկում, ծանոթացել պատմամշակութային միջավայրին, որտեղ զբոսաշրջային երթուղի է նախապատրաստվում, նախատեսվում է ճոպանուղային երթուղի, այնուհետեւ այցելեցին Տեղ գյուղի Սուրբ Գեւորգ վերանորոգված եկեղեցի:

Ինչպես «Սյունյաց երկրին» հայտնեց Ա.Ամիրյանը, շաբաթ-կիրակի օրերը նա օգտագործում է մարզային այցելություններ ունենալու համար, լինում մարզային մշակութային օջախներում (թատրոններ, ցուցասրահներ, թանգարաններ, գրադարաններ): Լինելով Գորիսի Վաղարշ Վաղարշյանի անվան թատրոնում, ստեղծագործական աշխատանքներով հետաքրքրվելուց զատ՝ ծանոթացել է թատրոնի 2017 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությանը. **«Մենք նոր կարգ ենք սահմանել, -** տեղեկացրեց նախարարը**, - բոլոր ՊՈԱԿ-ների կիսամյակային հաշվետվություններին ենք ծանոթանում, որ տարեվերջին սխիռված չլինենք արձանագրել վաս ցուցանիշներ, որ երկրորդ կիսամյակի ընթացքում բացթողումները, թերությունները կարողանանք շտկել: Անցյալ տարեվերջին արդեն 140 մլն դրամ հավելյալ եկամուտ ենք կարողացել ստեղծել նախարարության ՊՈԱԿ-ների միջոցով, նման լուրջ ցուցանիշ նախարարությունը երբեք չի ունեցել»:**

Սյունիքում աշխատանքային երկրորդ օրը մշակույթի նախարարը Գորիսում եղավ Ակսել Բակունցի եւ Սերո Խանզադյանի տուն-թանգարաններում: Այնուհետեւ նախարար Ա.Ամիրյանը ծանոթացավ Որոտնավանքի ամրակցման եւ նորոգման ընթացիկ աշխատանքներին: Լոր գյուղում նախարարն այցելեց Համո Սահյանի տուն-թանգարան: Պետական միջոցներով վերանորոգումից հետո կբացվի Զաքար Խաչատրյանի եւ Արտաշես Հովսեփյանի տուն-թանգարանը:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

Տես նաեւ՝ էջ 2

# Լեւոն Մկրտչյանը եւս մեկ անգամ կարեւորել է ուսուցչի դերը

*«Յանկացած փոփոխության գնալուց առաջ պետք է հասակ ձեւակերպել նպատակը. ինքնանպատակ շարժումը կործանարար է կրթության համար, քանի որ մեր համակարգում բարեփոխումների արդյունքը 5-10 տարի հետո է երեւում: Մենք ուզում ենք, որ դրանք լինեն լավ մտածված, հասակ ու ժամանակի թելադրանքով»*, - նշել է ՀՀ կրթության եւ գիտության նախարար Լեւոն Մկրտչյանն օգոստոսյան խորհրդակցությունների շրջանակում ՀՀ Այունիքի մարզի կրթության պատասխանատուների հետ հանդիպման ժամանակ: Ներկայացնելով բարեփոխումների իրականացման կառուցվածքը՝ նախարարն այդ գործում առանձնահատուկ կարեւորել է ուսուցչի դերը՝ շեշտելով. *«Ներկայացնելով «Ուսուցիչ» նախաձեռնությունը՝ քարոզչության ցանկություն չունենք, այլ պարզապես ուզում ենք դիմել կրթության ոլորտի կարեւորագույն հասվածին՝ ուսուցչությանը, ովքեր անկախության առաջին իսկ օրվանից առանց պաստաճ վարձատրության, առաքելության գիտակցումով կատարում են իրենց պարտականությունը: Ուզում ենք մշակել մոտիվացված համակարգ, որը կնպաստի ուսուցչի մասնագիտական որակի բարձրացմանը, նրա սոցիալական վիճակի բարելավմանը եւ կնախանշի հեռանկարային զարգացումները՝ դրանով նպաստելով ուսուցչի հեղինակության վերականգնմանը»*, - ավելացրել է Լեւոն Մկրտչյանը՝ կոչ անելով ուսուցչությանը՝ բովանդակային քննարկումների ժամանակ ակտիվություն ցուցաբերել, խոսքից անցնել գործի եւ գործնական ծրագիր ներկայացնել: Անդրադառնալով ուսուցիչների տարակարգերի, դպրոցների ընտրության խնդրին՝ ԿԳ նախարարը նշել է. *«Անշուշտ, ուսուցիչ ասելով՝ ես, իհարկե, նաեւ տնօրենին նկատի ունեմ: Երբ ընտրությունից ընտրություն մենք նրա հարստությանը հարվածում ենք, չենք կարող ակնկալել, որ նրանք մեր երեխաներին, երիտասարդներին ճիշտ կդաստիարակեն: Մենք պետք է կարողանանք դպրոցական համակարգը դարձնել բոլորի հոգածության առարկան, իսկ դա պետք է սկսել ուսուցչից»:*

Այունիքի մարզ կատարած այցի ընթացքում նախարար Լեւոն Մկրտչյանը եղել է նաեւ Գորիսի պետական համալսարանում, ծանոթացել իրականացվող կրթական ծրագրերին եւ բուհի նյութատեխնիկական հնարավորություններին: Նախարարը հանդիպում է ունեցել բուհի պրոֆեսորադասախոսական կազմի հետ, պատասխանել նրանց հուզող բոլոր հարցերին:

**2017-08-29**
**edu.am**

# Գորիսի 200-ամյա բանտը կվերածվի թանգարանի

Սենսացիոն այդ հայտարարությունն արել է ՀՀ մշակույթի նախարար Արմեն Ամիրյանն օգոստոսի 26-27-ին Այունիքի մարզ կատարած այցելության ընթացքում: Այդ որոշումը, ի դեպ, համահունչ է գորիսեցիների ցանկությանը, ինչի վերաբերյալ տարիներ շարունակ հնչել են առաջարկություններ:

Օգոստոսի 27-ին Գորիս համայնքի ղեկավար Վաչագան Ադունցի ուղեկցությամբ Արմեն Ամիրյանն այցելեց Գորիսի բանտ եւ ծանոթացավ կառույցի տարածքին ու հնարավորություններին:

Հիշեցնենք, որ դեռեւս 2009 թվականին՝ ՀՀ կառավարության սյունիքյան արտագնա նիստի ժամանակ (վարչապետ՝ Տիգրան Սարգսյան), ընդունվել է որոշում բանտը Գորիսից տեղափոխելու, Գորիս քաղաքից դուրս նոր բանտ կառուցելու մասին: Հիմա էլ պարզվում է, որ տարածքն ազատելուց հետո այն կտրամադրվի մշակույթի նախարարությանը եւ կվերածվի թանգարան-հյուրանոցի:

Նույն օրն Արմեն Ամիրյանը Գորիս համայնքի ղեկավար Վաչագան Ադունցի հետ ուրվագծել է առաջիկա անելիքները՝ կապված Գորիս քաղաքն ԱՊՀ երկրների 2018թ. մշակութային մայրաքաղաք հռչակելու հետ: Նախարարն ու համայնքի ղեկավարը կարեւոր այդ հարցը հանգամանալից կքննարկեն եւ անելիքները կհստակեցնեն սեպտեմբեր-հոկտեմբերին:

Նախարարն այցելել է Ակսել Բակունցի տուն-թանգարան, որտեղ ծանոթացել է ցուցադրությանը, ինչի վերաբերյալ հանգամանալից տեղեկություններ է ներկայացրել թանգարանի տնօրեն Վարդան Սարգսյանը: Արմեն Ամիրյանը ողջամիտ եւ պահանջված համարեց Ակսել Բակունցի ստեղծագործությունների՝ այլ լեզուներով թարգմանված ու ժամանակին տպագրված տարբերակների վերահրատարակումը, ինչի վերաբերյալ առաջարկություն ներկայացրին թանգարանի տնօրեն Վարդան Սարգսյանն ու համայնքի ղեկավար Վաչագան Ադունցը:

«Այունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանի հետ զրույցում նախարարը հետաքրքրվել է թերթի գործունեությամբ եւ հատկապես հատուկ համարների հրատարակման ուղղությամբ խմբագրության 2018թ. ծրագրերով:

Այունիքյան շրջագայության ընթացքում Արմեն Ամիրյանին ուղեկցում էր ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի ղեկավար Սամվել Մուրադյանը:

**Սեփ. լրատվություն**

# Տարածաշրջանի խնդիրները՝ կողմնորոշիչ՝ ուսուցանվող մասնագիտությունների ընտրության հարցում

Տարածաշրջանի խնդիրները՝ կողմնորոշիչ՝ ուսուցանվող մասնագիտությունների ընտրության հարցում

ՀՀ կրթության եւ գիտության նախարարության Սիսիանի պետական քոլեջը գործում է 1993 թվականից: Այդ տարիների ընթացքում կրթօջախը դարձել է միջին եւ արհեստագործական մասնագիտությունների պատրաստման իսկական դարբնոց: Ի սկզբանե քոլեջի ղեկավարությունն իր առջեւ նպատակ է դրել ունենալ մրցունակ բաժիններ, միշտ ընթանալ կյանքին համընթաց: Այդպիսի շեշտադրմամբ աշխատելու գործելաոճը կյանքում քննություն բռնեց. քոլեջի շրջանավարտների մեծ մասն աշխատանք ունի եւ այդ աշխատանքով ընտանիք է պահում:

Սկզբնական շրջանում քոլեջն ուներ 5 բաժին, իսկ հիմա՝ 9:

*- Քոլեջում ուսուցանվող մասնագիտությունների ընտրության հարցում մեր կողմնորոշիչները Սիսիանի տարածաշրջանի հիմնախնդիրներն են: Օրինակ, մեզ մոտ մեղվաբուծությունը զարգացման հեռանկարներ ունեցող ոլորտ է: Սիսիանն ունի այդ ճյուղի զարգացման համար բնակլիմայական անհրաժեշտ պայմաններ: Սակայն այս ոլորտը ցանկալի հաջողությունների չի հասնում այն պատճառով, որ մեղվապահները չունեն անհրաժեշտ գիտելիքներ:*

Եվ քոլեջի տնօրեն Վարոս Սիմոնյանը խոսքը փոխանցում է Օլգա Բարսամյանին, ով մեղվաբույծներ պատրաստող կարճաժամկետ ծրագրի համակարգողն է:

*- Այս ծրագիրը մենք իրականացնում ենք «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության աջակցությամբ: Կազմակերպել ենք կարճաժամկետ դասընթացներ, դրանց մասնակցելու համար հավաքագրել աշխատաշուկայում ոչ մրցունակ խմբերից հաշմանդամություն ունեցող 40 երիտասարդ: Իսկ ինչո՞ւ մեղվաբուծությունն ընտրեցինք: Պատճառն այն է, որ ունենք ալոյան մարգագետիններ, բացի դրանից, կարող ենք փոքր ծախսումներով աղահովել կայուն աշխատանք եւ եկամուտներ: Հասարակության կողմից պակաս ուշադրության արժանացող այս երիտասարդները, մասնակցելով դասընթացների, ստացան անհրաժեշտ գիտելիքներ: Կազմակերպության աջակցությամբ ձեռք բերեցինք մեղվաբուծությանն առնչվող բոլոր միջոցներն ու նյութերը: Իսկ դասընթացների ժամանակ ավելի շատ տեղ հատկացրինք գործնական աշխատանքին:*

Պարապմունքների արդյունավետության արդյունքը տեսանք քոլեջի բակում: Երիտասարդները սկսել են մեղրաքամի աշխատանքը, եւ արդյունքներն ակնհայտ են:

Զրուցում ենք Մասիս Առաքելյանի հետ:

*- Ես արդեն ինքնուրույն կարող եմ մեղուներ պահել: Մենք տանն ունենք մեղուներ, որոշել եմ մեղվափեթակների թիվն ավելացնել եւ զբաղվել մեղվաբուծությամբ:*

Սուրեն Գրիգորյանն էլ թե՝

*- Դասընթացների ժամանակ մեղվաբուծության մասին շատ գիտելիքներ ստացա: Այժմ ինձ համար հետաքրքիր է այդ գործով զբաղվելը:*

էջ 5

# ԱՐԹՈՒՐ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ. «Ճանապարհը բարդ է, բայց թեւաթափ չլինենք եւ առավելագույն կամք դրսեւորենք հնարավոր մարտահրավերներին դիմակայելու համար»

Նոր ուսումնական տարվա շեմին, թերեւս, ամենաշատ քննարկվող հարցերից մեկը հանրապետության բուհերի ընդունելության, դիմորդների թվի պակասի, դրանց պատճառների եւ հնարավոր հետեւանքներին է առնչվում: Այդ եւ որոշ այլ հարցերի շուրջ զրուցեցինք Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղի տնօրեն, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Արթուր Կոստանդյանի հետ:

- **Պարո՛ն Կոստանդյան, ներկայացրեք, խնդրեմ, 2017-18 ուսարվա առկա ուսուցմամբ ընդունելության ընդհանուր պատկերը Ձեր ղեկավարած հաստատությունում:**

- Ինչպես սպասվում էր, 2017-18 ուստարվա առկա ուսուցմամբ ընդունելության համար ունեցանք դիմորդների եւ ընդունվողների թվերի նվազող դինամիկա: Հայտագրել էինք 85 տեղ, ունեցանք 48 դիմորդ, մեր մասնաճյուղի ուսանող դարձավ 39 հոգի: Առհասարակ հայտագրված տեղերի եւ ընդունված դիմորդների թվերի հարաբերակցությունը հստակ չափորոշիչ չէ. եթե անցյալ տարիների հետ համեմատելով ստատիստիկ վերլուծություն անենք, ապա նախորդ տարիներին հայտագրվել է 125 տեղ, ապա՝ 100… Ամբողջ հանրապետությունում է գրանցվել այդ առումով նվազող դինամիկա: Ցավով պետք է նշեմ, որ դա հատկապես զգալի է մարզային բուհերում:

- **Ի՞նչ մասնագիտությունների գծով եք իրականացրել առկա ուսուցմամբ այս ուսարվա ընդունելությունը:**

- Այս ուստարում ընդունելությունն իրականացվել է «Տնտեսագիտություն» (11 ընդունված դիմորդ), «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» (14), «Լեռնային գործ եւ օգտակար հանածոների արդյունահանում» (11), «Մետալուրգիա» (3) մասնագիտություններով: Ընդհանուր առմամբ ընդունված 39 դիմորդից 14 հոգի կսովորի անվճար հիմունքներով: Այստեղ պետք է նշեմ, որ արդեն մի քանի տարի է՝ «Մետալուրգիա» մասնագիտությամբ ուսանողների թիվը մտահոգիչ է, ինչը տվյալ մասնագիտության արդիականության առումով մտածելու տեղիք է տալիս: Կարծում եմ՝ այդ մասնագիտությունը մեկ այլ՝ ավելի մեծ պահանջարկ ունեցող մասնագիտությամբ փոխարինելու կարիք կա, բայց մյուս կողմից էլ այդ մասնագիտությունն ընտրած՝ բանակից զորացրված ուսանողները խնդրի առաջ կկանգնեն: Բնական է, մասնագիտության ցանկի կրճատումը չի բխում մեր եւ տարածաշրջանի շահերից, ուստի պետք է ամեն հնարավորն անել երկկողմանի շահերի համապատասխանությունն ապահովելու համար:

Հեռակա ուսուցմամբ ընդունելությունը հավանաբար կկազմակերպվի օգոստոսի 20-ից հետո (խմբ.՝ հարցազրույց վարելու օրը դեռեւս ընդունելության կազմակերպման ժամկետը հստակեցված չէր) վերոնշյալ մասնագիտությունների գծով՝ դրանց ավելացնելով «Արյունաբերական եւ քաղաքացիական շինարարություն» եւ «Օգտակար հանածոների հարստացում» մասնագիտությունները:

- **Ուսման վարձավճարների չափի մեջ այս տարի փոփոխություններ կատարվե՞լ են: Եվ կարո՞ղ ենք ասել, որ ուսանողների թվի պակասն էական անդրադարձ կունենա մասնաճյուղի ֆինանսական վիճակի վրա:**

- Նախ՝ ուսման վարձավճարների մասին ասեմ, որ այս ուստարում փոփոխություն չկա. առկա ուսուցմամբ վարձավճարների չափը 390-450 հազար դրամ է, հեռակա ուսուցմամբ՝ 312-360 հազար դրամ: Ինչ վերաբերում է ուսանողների թվի պակասով պայմանավորված մասնաճյուղի հնարավոր ֆինանսական ճգնաժամին, ասեմ, որ, բնական է, այն որոշակի բացասական ազդեցություն կթողնի, բայց ունենք ստաբիլիզացիոն ֆոնդ, ինչպես այս ուստարվա, այնպես էլ հաջորդ ուստարվա համար նախատեսված: Սա թույլ կտա խուսափել մասնաճյուղի համար ոչ ցանկալի ֆինանսական ծանր վիճակում հայտնվելուց:

- **Եվ՝ այս օրերին առավել հաճախակի քննարկվող մի հարց. ըստ Ձեզ՝ ինչո՞վ է պայմանավորված դիմորդների թվի պակասը:**

- Առաջին հերթին՝ շրջանավարտների թվի պակասով, այսինքն՝ հանրապետությունում ծնելիության մակարդակի զգալի նվազում, աշխատանքային միգրացիան… Իմ կարծիքով՝ մարզային բուհերում դիմորդների թվի պակասը պայմանավորված է նախեւառաջ ծնողների եւ շրջանավարտների՝ պարտադիր մայրաքաղաքային որեւէ բուհ ընդունվելու «մոլուցքով»: Չեմ կարծում, որ մարզային բուհերը թերանում են, մանավանդ եթե հաշվի առնենք, որ նույն ծրագրերով եւ ուսումնական պլաններով ենք առաջնորդվում: Չգիտեմ՝ միգուցե ծնողը կարծում է, թե իր աչքից հեռու գտնվելով՝ երեխան մայրաքաղաքի բուհում ավելի լավ կսովորի. չկա նման բան, սովորողն ամեն տեղ էլ կսովորի: Այստեղ հարկ է նշել, որ մոտիվացիայի խնդիր նույնպես կա. նպատակը՝ բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորել, իսկ մյուս կողմից էլ՝ արդեն ուսանողների շրջանում՝ չսովորելը: Մենք դեռեւս չենք կարողանում հասնել այն գիտակցական մակարդակին, որ լավ սովորելը պարտադիր է. հասել ենք այն հանգրվան, որ ծնողը խնդրում է երեխային գնահատական նշանակել, այլ ոչ թե գիտելիք տալ: Չեմ կարողանում հասկանալ, թե ինչ է կատարվում մեր ազգային մտածողության, մենթալիտետի հետ. խորհրդային շրջանի փլուզումից հետո, որ լավ կրթական համակարգ ուներ, եւ հատկապես բուհեր գիտելիքների հարուստ պաշարով էին ընդունվում ու սովորում, միանգամից հասանք այս մակարդակին, երբ հիմնականում բացակայում է լավ սովորելու ձգտումը:

- **Ձե՞ք կարծում, որ դա նախեւառաջ պայմանավորված է բուհերի ինֆնաֆինանսավորման հանգամանքով, երբ գոյությունը պահելու համար ստիպված շատ դիմորդ են ընդունում:**

- Ցավոք, այդ հանգամանքը նշանակալի դերակատարություն ունի մեր կրթական ողջ համակարգի թերանալու վրա. լինի դա հանրակրթական դպրոց, միջին մասնագիտական կամ էլ բարձրագույն ուսումնական հաստատություն: Եթե ինքնաֆինանսավորման հարցը չլիներ, գուցեեւ շեշտը դրվեր միայն ու միայն որակի, այլ ոչ քանակի վրա:

- **Բանակից զորացրված ուսանողների համար զեղչային ինչպիսի՞ քաղաքականություն եք վարում:**

- Առհասարակ ոչ միայն բանակից զորացրված, այլեւ ուսանողների որոշ խմբի համար գործում է զեղչային ճկուն համակարգ՝ օրենքով սահմանված կարգին համապատասխան: Օրինակ՝ անցյալ ուստարում մինչեւ 70 ուսանողի համար տարբեր չափի զեղչ ենք իրականացրել:

- **Եթե ընդհանրացնելու լինենք, մասնաճյուղն ի՞նչ խնդիրներ ունի:**

- Ասել, որ մասնաճյուղը հարուստ է խնդիրներով, ճիշտ չի լինի, բայց, ինչպես յուրաքանչյուր գործող կառույց, ժամանակին համընթաց քայլելու համար համապատասխան գույքի անընդհատ վերազինման, թարմացման կարիք է զգացվում:

Կադրերի առումով նույնպես էական խնդիրներ չունենք, միայն այստեղ պետք է նշեմ, որ «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» մասնագիտության գծով ծրագրերում բովանդակային առումով որոշ փոփոխություններ են տեղի ունեցել, եւ այս ուստարում ընդունված ուսանողներին երկու տարի հետո մասնագիտական առարկաներ դասավանդելու համար նեղ մասնագետների կարիք կարող է զգացվել: Բայց երկու տարին բավական ժամանակ է համապատասխան վերապատրաստումներ անցնելու կամ մասնագետներ ընդունելու համար: Հայցորդներ ունենք, ովքեր առաջիկայում թեզերը կպաշտպանեն: Երիտասարդ դասախոսների շրջանում նույնպես գիտության հանդեպ հետաքրքրությունը մեծ է: Հարկ է նշել, որ նոր մասնագիտությունների ներդրման համար կարեւոր է համապատասխան մասնագետ-դասախոսների առկայությունը, մյուս կողմից էլ՝ տվյալ մասնագիտությունը պետք է լինի, որ մասնագետ լինի: Ի դեպ, այստեղ նշեմ, որ նախատեսում ենք ֆակուլտետային վերադասավորումներ՝ շեշտը դնելով որակի վրա: Պետք է կազմենք առավել էֆեկտիվ հաստիքացուցակ. հունվարին այն կվերանայվի:

Ինչ վերաբերում է մասնաճյուղում առկա որոշակի վերանորոգման աշխատանքներին, ապա դրանք ընթացիկ հարցեր են, որոնք փորձում ենք կարգավորել: Այստեղ կցանկանայի նշել մարզադահլիճի վերանորոգման, Մոբայլ լուծումների լաբորատորիայի մասնաշենքի մի մասի նորոգման անհրաժեշտության մասին: Ի դեպ, մասնաճյուղի Մոբայլ լուծումների եւ վիրտուալ լաբորատորիաները, թեպետ գործում են, բայց դրանց հնարավորությունները ոչ լիարժեք են օգտագործվում: Համակարգչային պարկի թարմացումը նույնպես ցանկալի կլիներ, այս տարի նաեւ որոշ ձեռնարկություններից ստացանք դիդակտիկ սարքավորումներ, որոնք օգնում են դասապրոցեսի՝ առավել արդյունավետ կազմակերպելուն:

- **Մասնաճյուղի համագործակցության շրջանակների մասին ի՞նչ կասեք:**

- Հիմնական եւ ամենակարեւոր համագործակցությունը երկու խոշոր հանքարդյունաբերական կազմակերպությունների հետ է՝ «Զանգեզուրի ՊՄԿ» եւ «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲ ընկերությունների հետ, հատկապես ուսանողական պրակտիկաների՝ սահմանված կարգով եւ գրաֆիկով անցկացման առումով: Գիտեք՝ սրանք մասնավոր կազմակերպություններ են եւ կարող են նաեւ չհամագործակցել:

Ինչ վերաբերում է միջազգային ծրագրերին, ապա այս պահին գործող ծրագիր չունենք, բայց առաջիկայում այդ հարցը կքննարկվի: Պարզապես այստեղ խնդիրն այն է, որ այդ ծրագրերին մասնակցում է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի երեւանյան կրթահամալիրը եւ այնտեղ է որոշվում, ծրագրից կախված, տվյալ մասնաճյուղն ընդգրկել, թե՝ ոչ: Նախկինում Կապանի մասնաճյուղը բավականին ակտիվ մասնակցել է տարբեր միջազգային ծրագրերի:

- **Խոսակցություններ են շրջանառվում նաեւ մասնաճյուղում մագիստրոսական կրթություն ստանալու հնարավորություն ունենալու, հենակետային դպրոց ստեղծելու մասին:**

- Հենակետային դպրոցը, նախեւառաջ, ակնկալում է հետագայում մասնաճյուղի դիմորդների թվի ավելացում, եւ այն բացելու գործընթացն ընթացքի մեջ է: Ինչ վերաբերում է մասնաճյուղում մագիստրոսական կրթության կազմակերպմանը, ապա այդ աշխատանքները նույնպես ընթացքի մեջ են: Համոզված եմ՝ այս երկուսի դեպքում մասնաճյուղը զգալի թափ կստանա, եւ տարածաշրջանում ավելի կբարձրանա դրա դերակատարությունը: Միջին մասնագիտական կրթության գծով լիցենզավորված մասնագիտություններ ունենք. այս ուստարում անվճար տեղերի համար էինք հայտագրել, բայց չհատկացվեց:

- **Ձեր շնորհավորանքը՝ նոր ուսումնական տարվա կապակցությամբ:**

- Շնորհավորում եմ բոլորիս, մաղթում հաջողություններ, միաժամանակ կոչ անում նոր ուստարին սկսել «Որակ» խորագրով: Համոզված եմ՝ համապատասխան ներուժ ունենք առավել որակյալ կրթություն կազմակերպելու համար, պարզապես շատ դեպքերում կամքն է բացակայում: Ճանապարհը բարդ է, բայց թեւաթափ չլինենք եւ առավելագույն կամք դրսեւորենք հնարավոր մարտահրավերներին դիմակայելու համար:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**14 օգոստոսի 2017 թ.**

# Է՞յ, ո՞վ ես դու, որ...

Քաջարանի կոմբինատում իսկական դիմակահանդես է. դրսից ներմուծված եւ ներդրված մարդիկ, ովքեր տնօրինում են մարզի տնտեսության մոտ 80 տոկոսի կառավարումը, շարունակում են անհայտ մնալ մարզի հանրությանը, նույնիսկ հանքագործների այդ կոլեկտիվին:

Փաստորեն մարզի տնտեսության ճակատագիրը, որից լիովին կախված է տարածաշրջանի բնակչության զգալի մասի սոցիալական վիճակը, կենսամակարդակը, կենտրոնացվել է մի խումբ օտարների ձեռքում՝ Միեր Պոլուսկով, Զարուհի Տոնապետյան..., որոնց ով լինելը հայտնի չէ, ովքեր որոշ ժամանակ անց անպայման անհայտանալու են՝ որեւէ պատասխանատվություն չկրելով ո՛չ ձախողումների, ո՛չ Սյունիքին պատճառած բարոյական ու տնտեսական վնասների համար:

Դիմակահանդեսի գլխավոր դերակատարը (գոնե թղթի վրա) Միեր Պոլուսկով առեղծվածն է:

Ո՞վ է այդ մարդը. ոչ ոք (համենայնդեպս՝ տեղաբնակների միջավայրում) չգիտի:

Միեր Պոլուսկով անձնավորության իսկական կենսագրությունն իմանալը գրեթե հնարավոր չէ: Անհնարին է իմանալ նաեւ, թե ինչպե՞ս, ի՞նչ հանգամանքների արդյունքում, ի՞նչ արժանիքների շնորհիվ է մարդը հայտնվել այդ պաշտոնում: Անգամ նրա նախորդը՝ Նիլլ Սթիվենսոն օտարականը, այդչափ խորթ չէր Սյունիքին ու մերժելի, որքան այս անհայտը:

Միերի պարագայում հանրությանը հետաքրքրում է մեկ այլ հարց եւս՝ ինքը Քաջարանի կոմբինատի իրակա՞ն ղեկավարն է, թե՞ սովորական շիրմա է՝ գավառական նմուշի, կամ՝ կավե ոտքերով հսկա...

Կոմբինատի մեր աղբյուրները պնդում են, որ ինքը սոսկ թուղթ ստորագրող է եւ որեւէ առնչություն չունի որոշումների ընդունման, կոմբինատի իրական գործընթացների եւ հատկապես ֆինանսական հոսքերի կառավարման հետ:

Միերի անունից կյանքի է կոչվում մեր օրերի համար անհավատալի մի ախմախություն՝ Հայաստանի ամենախոշոր տնտեսվարող սուբյեկտներից մեկը դարձել է փակ գոտի հանրության համար՝ հակառակ Հայաստանի Հանրապետության օրենքների:

Օրինակ, այդ ընկերությունը համառորեն չի ուզում տրամադրել կոմբինատի ֆինանսական հաշվետվությունները, որոնք, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի համաձայն, գաղտնիք չեն եւ ենթակա են պարտադիր հրապարակման: Միերը նույնիսկ չի ուզում ասել, թե ե՞րբ եւ ո՞ր լրատվամիջոցում են այդ հաշվետվությունները ներկայացրել հանրությանը:

Միերի՝ ծպտված մնալու եւ իր ղեկավարած տնտեսության հաշվետվությունները թաքցնելու հետեւողական գործելակերպը դրսեւորվում է այնպիսի ժամանակներում, երբ օրեր առաջ՝ հուլիսի 18-ին, Հայաստանում մեկնարկեց Աջակցություն Հայաստանի կարողությունների բարելավման՝ ԱճԹՆ (Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնություն) իրագործելու եւ ընդերքի օգտագործման թույլտվությունների եւ պայմանագրերի թափանցիկության ու հաշվետվողականության բարձրացման նպատակով ծրագիրը:

Այն իրականացվում է Հայաստանում Բրիտանական դեսպանության ֆինանսավորմամբ:

Ընդ որում՝ ծրագրի մեկնարկի ժամանակ Հայաստանում Միացյալ Թագավորության դեսպան Ջուդիթ Մարգարեթ Ֆարնուորթը կարեւորել է հանքարդյունաբերության ոլորտի տեղեկատվության թափանցիկությունը: Դեսպանը կարեւորել է նաեւ հանքարդյունաբերական ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտումը:

Ի դեպ, ԱճԹՆ բնական պաշարների բաց եւ հաշվետու կառավարումը խթանող համաշխարհային ստանդարտ է, որին մասնակցում են 51 երկիր, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունը: Այն ընդգրկում է բնական պաշարների արդյունահանումից մինչեւ քաղաքացիների վրա դրա ունեցած ազդեցության հետ կապված խնդիրները...

Եվ չնայած այդ ամենին՝ անհայտ ծագումով, անհայտ հանգամանքների արդյունքում Սյունիքում ներդրված եւ անհայտ առաքելություն իրականացնող Միեր Պոլուսկովը շարունակում է թերթի խմբագրությունից թաքցնել, թե պարտադիր հրապարակման ենթակա հաշվետվությունները հայաստանյան ո՞ր լրատվամիջոցում եւ ե՞րբ են հրապարակվել:

**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

# ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանին Հարցում

Պաշտոնատար եւ այլ անձանց անվտանգությունն ապահովելու գործընթացը կազմակերպվում է համաձայն Հայաստանի Հանրապետության «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» օրենքի: Նշված օրենքի համաձայն (օրենքի 5-րդ հոդված)՝ պետական պահպանություն տրամադրվում է՝ 1) Հայաստանի Հանրապետության նախագահին, 2) Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին, 3) Հայաստանի Հանրապետության վարչապետին: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ այլ պետական պաշտոնյաներին, հասարակական, քաղաքական, կրոնական եւ այլ գործիչներին, ինչպես նաեւ այլ անձանց կարող է պետական պահպանություն տրամադրվել Հայաստանի Հանրապետության նախագահի սահմանած կարգով եւ ժամկետներում: Այդ անձանց պահպանությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության նախագահի սահմանած իրավասու պետական մարմինը:

Միեւնույն ժամանակ, ՀՀ ոստիկանությունը դեռեւս 2013թ. հրապարակված տարեկան զեկույցում արձանագրել է, որ *«Ոստիկանությունը շարունակում է իրականացնել իր գործառույթները եւ ընդլայնում դրանց սահմանները՝ `կարգի հրավիրելով տարատեսակ գոռոզամիտներին, ովքեր թիկնազորերով ու շարասյուներով փորձում են օրենքի եւ հասարակության հանդեպ իրենց իբր գերազանցությունը ցուցադրել`»:* Թիկնազորով շրջելու անթույլատրելիությունը վերահաստատվել է ՀՀ ոստիկանության կողմից բազմաթիվ անգամ, ինչպես նաեւ վերահաստատվել է անձամբ ՀՀ ոստիկանապետ Վովա Գասպարյանի կողմից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դուք գրեթե միշտ շրջում եք երկու ավտոմեքենայով, որոնցից մեկը փաստացի Ձեր թիկնազորն է, եւ հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները, խնդրում ենք պարզաբանել ստորեւ նշված հարցերը եւ այդ մասին տրամադրել տեղեկատվություն:

1) Ի՞նչ վտանգ է սպառնում Ձեզ, որ, ի տարբերություն բազմաթիվ նախարարների եւ Սյունիքի բազմաթիվ նախկին մարզպետների, անհրաժեշտություն է առաջացել շրջել թիկնազորով:

2) Արդյո՞ք Հայաստանի Հանրապետության նախագահի կարգադրությամբ Ձեզ տրամադրվել է հատուկ պետական պահպանություն, եթե այո, ապա ի՞նչ ժամկետով եւ ո՞ր հանգամանքների հետ կապված: Խնդրում ենք տրամադրել նաեւ համապատասխան իրավական ակտի պատճենը:

3) Եթե Ձեզ չի տրամադրվել հատուկ պետական պահպանություն, ապա խնդրում ենք պարզաբանել՝ ի՞նչ գումարներից են վճարվում Ձեր թիկնազորի ծախսերը, ներառյալ ավտոմեքենայի, վառելիքի եւ անձնակազմի աշխատավարձի ծախսերը:

4) Խնդրում ենք պարզաբանել՝ արդյո՞ք թիկնազորը շարունակում է Ձեզ ուղեկցել նաեւ այն ժամանակ, երբ այցելում եք Երեւան, թե՞ թիկնազորն անհրաժեշտ է միայն Սյունիքի մարզում:

5) Ակնկալվող պատասխանը բնակչության կողմից առավել արժանահավատ դարձնելու նպատակով խնդրում եմ տրամադրել համապատասխան ապացույցներ՝ ներառյալ Ձեր ծառայողական ավտոմեքենայի եւ թիկնազորի ավտոմեքենայի սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները, որտեղ կերեւա, թե ո՞վ է հանդիսանում դրանց սեփականատերը, թիկնապահների աշխատանքային կամ ծառայությունների մատուցման պայմանագրերի պատճենները, որտեղ կերեւան համապատասխան պատվիրատուն (վճարող կողմը), ինչպես նաեւ վճարի չափը:

Նաեւ հաշվի առնելով պետական բյուջեն խնայողաբար եւ նպատակային ծախսելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության նախագահի, Հայաստանի Հանրապետության վարչապետի եւ մի շարք այլ բարձրաստիճան պաշտոնատար անձանց ու ՀՀ համապատասխան օրենսդրության պահանջը, կարեւորելով պետական ֆինանսական միջոցների արդյունավետ ծախսման նկատմամբ հանրային վերահսկողության անհրաժեշտությունը եւ նշված հարցում հանրային հետաքրքրությունը, խնդրում ենք պարզաբանել նաեւ՝

# Իսկ մենք չէինք հավատում վարչապետի խոսքին, որ Սյունիքը մի օր Իսրայել է դառնալու

էջ 1

Նախ, որքանով տեղյակ ենք, միայն երկրի նախագահն է (իր պաշտոնի բերումով) ժամանակ առ ժամանակ ուղղաթիռով շրջագայություններ կատարում (այն էլ՝ երբեմն, այն էլ՝ խիստ անհրաժեշտության դեպքում):

Պատերազմող Արցախի նախագահը Երեւան այցելելիս անգամ չի օգտվում ուղղաթիռի ծառայությունից. ժամանակ առ ժամանակ նրան տեսնում ենք իր ծառայողական մեքենայի մեջ՝ Ստեփանակերտ-Երեւան մայրուղում:

Հայաստանի Հանրապետության վարչապետին ու պաշտպանության նախարարին եւս ուղղաթիռով տեղաշարժվելիս չենք տեսնում, մեր ամենահայտնի օլիգարխներին՝ նույնպես:

Ուղղաթիռ տեսնում ենք հատկապես սահմանամերձի լարված օրերին եւ անմիջապես մտածում՝ երեւի վիրավոր են տեղափոխում կամ...

Այդ համապատկերի վրա չի կարող արտառոցություն չհամարվել Սյունիքի մարզպետի շվայտ ու ցոփ պահվածքը, այն էլ երկրի համար կրիտիկական այնպիսի ժամանակաշրջանում, երբ օրվա հացի խնդիր ունեցող մարդն ամսական 1000 դրամ է վճարում հօգուտ հայոց բանակի, երբ կյանքի եւ մահվան խնդրի առաջ կանգնած հարյուրավոր մարդիկ բուժման գնալու համար միջոցներ չունեն, երբ տասնյակ հազարավորները մեկնում են արտերկիր՝ ընտանիքի հոգսերն այնտեղից հոգալու համար:

Մարզպետ կոչվածը կարող է ցանկացած պատասխանով հակազդել մեզ, բայց չի կարող ասել, որ ուղղաթիռից օգտվում է իր միջոցների հաշվին, քանի որ այդ միջոցներն անաշխատ ճանապարհով Սյունիքից վերցված են, քանի որ դա հանքարդյունաբերության հետեւանքներից հիվանդացած եւ հիվանդացող սյունեցիների միջոցներն են: Եվ, ի վերջո, ինքը չունի այն ինտելեկտը, կազմակերպական ունակությունները, որ ինքնուրույն կարողանա մերօրյա Հայաստանի պայմաններում գոնե միջինից բարձր աշխատավարձ ստանալ:

Ի՞նչ է բխում ասվածից:

Կամ մարզպետն առողջական խնդիրներ ունի եւ ֆիզիկապես ի վիճակի չէ հինգ ժամ մեքենայով Երեւանից հասնել Կապան, ու պետությունն իր վրա է վերցրել նրա՝ Երեւանից Կապան մեկնելու հոգսը՝ նրա սյունիքյան «գործունեությունը» համարելով մեր պետության համար խիստ անհրաժեշտ:

Կամ անվտանգության լուրջ խնդիր ունի Սյունիքի մարզպետը՝ հայտնի աչքակապությունններից եւ աղավաղումներից բխող...

Ի դեպ, սյունիքյան հանրությունը դեռեւս պարզաբանում չի ստացել տարածված այն ասեկոսեի առումով, թե իբր երկրորդ նախագահի տղաները երկու անգամ Լինչի օրենքով հանդիպել են մարզպետի հետ:

Կամ էլ՝ այստեղ զբաղված է պետական, ազգային, սյունիքյան շահերից վեր ինչ-որ խորհրդավոր մի խնդրով, որի համար էլ նրա անձը դարձել է պետական հոգածության առարկա:

Որքա՜ն ճիշտ է իրավիճակը բնութագրում Եղիշե Չարենցը.

***Մի անտաշ կառ, շռա՜յլ խրախճանք,***
***Ինչ-որ վերին հանդուգն օրենքով***
***Մի տխմարի, մի ցոփ արարածի տված***
***Աններելի, լիրբ իրավունք՝***
***Ուրիշների մահու եւ ժանտախտի ժամին...***

Ստեղծված իրավիճակը կարող է եւ այլ բացատրություն ունենալ՝ Սյունիքն արդեն իսկ Իսրայել է, ինչը մեզ խոստացել էր հանրապետության վարչապետ Կարեն Կարապետյանը սյունիքյան վերջին այցի ժամանակ:

**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

6) ո՞րքան է կազմում Ձեր կողմից ուղղաթիռով Կապան եւ ԼՂՀ ճամփորդելու, ուղղաթիռ ամբողջ օրով Կապանում ենթադրաբար պահելու եւ վերադարձի գինը,

7) ո՞վ եւ ի՞նչ աղբյուրներից է վճարում նշված ուղեւորությունների գումարը,

8) ինչո՞վ է պայմանավորված հենց ուղղաթիռով ճամփորդելու անհրաժեշտությունը (մանավանդ որ ուղղաթիռով ժամանելուն զուգահեռ Ձեր ավտոմեքենաները վարորդների հետ նույնպես ժամանում են Կապան՝ օդանավակայանում Ձեզ դիմավորելու նպատակով),

9) այս դեպքում նույնպես խնդրում ենք տրամադրել ուղղաթիռային փոխադրման պայմանագրի պատճեն եւ վճարումը հավաստող փաստաթղթերը,

10) եւ վերջապես խնդրում ենք հայտնել՝ ո՞ւմ միջոցների հաշվին եւ որտե՞ղ եք բնակվում Սյունիքի մարզում, քանի որ՝ մեր տեղեկություններով, Սյունիքի մարզում չունեք անշարժ գույք, ինչպես նաեւ վարձակալած բնակարան, ո՞վ եւ որքա՞ն է վճարում Ձեր բնակարանի կամ տան համար,

11) բացի Ձեզնից՝ ովքե՞ր են նաեւ բնակվում նույն հասցեում:

Նշված վերջին հարցի վերաբերյալ հավելյալ պարզաբանում ենք՝ առաջադրված հարցը պայմանավորված չէ զուտ անձնական հետաքրքրությամբ, այլ պայմանավորված է պոտենցիալ կոռուպցիայի հնարավոր առկայության վերաբերյալ կասկածները հաստատելուն կամ փարատելուն:

Այս դեպքում նույնպես խնդրում ենք տրամադրել համապատասխան պայմանագրերը (եւ քանի որ Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի վարձակալության, օգտագործման կամ առուվաճառքի պայմանագրերը կնքված են համարվում նշված իրավունքների պետական գրանցման պահից՝ խնդրում ենք նաեւ տրամադրել պետական գրանցման վկայականի պատճենը կամ քաղվածք գրանցամատյանից այդ մասին):

Կանխավ շնորհակալություն ենք հայտնում անհրաժեշտ տեղեկություններ տրամադրելու համար:

Հիշեցնում ենք միաժամանակ՝ բացառությամբ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերի, տեղեկատվություն տրամադրելուց հրաժարվելը կամ ոչ հավաստի տեղեկատվություն տրամադրելը, ինչպես նաեւ սահմանված կարգի այլ խախտումներն առաջացնում են օրենքով ամրագրված պատասխանատվություն:

Հնգօրյա ժամկետում (հարցման թղթային տարբերակն ուղարկում ենք փոստով) սպասում ենք հարցման պատասխանին կամ մերժման հիմքերին՝ հակառակ դեպքում լիազորված պետական կառավարման մարմին կամ դատարան բողոքարկելու համար:

**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**
**«Սյունյաց երկիր» թերթի խմբագիր**

# Տարածաշրջանի խնդիրները՝ կողմնորոշիչ՝ ուսուցանվող մասնագիտությունների ընտրության հարցում

էջ 2

*Բացի դրանից, այստեղ հաճելի մթնոլորտ է ստեղծվել, շփվում ենք իրար հետ, նոր ընկերներ ունեմ: Մինչ այստեղ գալը ես ոչ մեկի հետ չէի շփվում, մի կողմ էի քաշվել, դարձել ինքնամփոփ: Հիմա շփվում եմ, հույս ունեմ, որ ամեն ինչ լավ է լինելու:*

Եվ քանի որ խոսք գնաց պահանջված մասնագիտությունների մասին, քոլեջի տնօրեն Վարոս Սիմոնյանն ասում է.

*- Սիսիանում զարգացած է անասնապահությունը, դրան զուգընթաց՝ գլուխ են բարձրացրել շատ հիվանդություններ: Իսկ տարածաշրջանում գրեթե չունենք անասնաբույժներ եւ անասնաբույծներ: Ես դա ասում եմ կատարած մեր ուսումնասիրությունների արդյունքներից ելնելով: Որոշել ենք առաջիկայում լուծել այդ խնդիրը՝ բացելով համապատասխան բաժին:*

Սիսիանի պետական քոլեջում ոչ միայն ուսումնասիրվում է մասնագիտությունների պահանջարկը, այլեւ որոշակի աշխատանք է իրականացվում ուսուցման որակը բարձրացնելու ուղղությամբ, դրան նպաստում է մոդուլային ուսուցումը, որին անցում է կատարվել:

*- Մոդուլային ուսուցումն ուսանողակենտրոն ուսուցում է, - ասում է ուսումնական աշխատանքների գծով քոլեջի փոխտնօրեն Լարիսա Հովակիմյանը, - ուսանողները սանում են կոնկրետ, գործնական հմտություններ եւ շրջանավարտները մտնում են կյանք արդեն որոշես կայացած մասնագետներ: Մոդուլային ուսուցումը քոլեջում արդեն ներ է դրվել արհեստագործական 4 մասնագիտության խմբում, իսկ «Քույրական գործ» մասնագիտության բաժնում այն փորձարկման փուլում է:*

Սիսիանի պետական քոլեջի 15 շրջանավարտ կրթությունը շարունակում է բարձրագույն ուսումնական հաստատություններում, իսկ դա խոսում է քոլեջում իրականացվող ուսուցման բարձր մակարդակի, ինչպես եւ քոլեջի՝ կրթության շարունակականությունն ապահովելու հնարավորությունների մասին:

Քոլեջում միջին մասնագիտական կրթական ծրագրերին զուգահեռ լուրջ ուշադրություն են դարձնում նաեւ արհեստագործական մասնագիտություններին: Իսկ դա զարգացնելու համար այստեղ կան նպաստավոր պայմաններ: Ուսանողներին պարապելու համար անհրաժեշտ կադրային բանկ ունի քոլեջը, ունի կաբինետներ, լաբորատորիաներ, իսկ ովքեր գյուղերից են եւ հնարավորություն չունեն ամեն օր տուն գնալ-գալու, ապահովվել են հանրակացարանով:

Ինչպե՞ս եք տեսնում քոլեջի ապագան, այն կարո՞ղ է դիմանալ ժամանակի մարտահրավերներին. Վարոս Սիմոնյանն այսպես պատասխանեց այդ հարցերին.

*- Ճիշտ խաղաքաղաքություն վարելու դեպքում քոլեջն ապագա կունենա:*

Ու համոզված է, որ քոլեջը միշտ պահանջարկ է ունենալու դպրոցի շրջանավարտների միջավայրում:

Այս օրերին շարունակվում է 2017-2018 ուսումնական տարվա ընդունելության փաստաթղթերի ընդունումը: Արդեն 60 դիմում ունեն, շուտով այդ թիվը կավելանա…

Քոլեջի բակում կա մի հուշաղբյուր, որի վրա փորագրված է՝ «Անմահ է քո սխրանքը, զինվոր»: Եվ 11 հոգու անուն-ազգանուն… Հուշաղբյուրը նվիրված է քոլեջի՝ Արցախյան գոյամարտում նահատակված շրջանավարտների եւ ուսանողների հիշատակին: Ուրեմն, քոլեջը նաեւ ռազմահայրենասիրական դաստիարակության դարբնոց է:

**ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ**
**15 օգոստոսի 2017 թ.**

# «Մեզնից մեկը». առաջնախաղ

Ամռան տապն ու արձակուրդային շրջանը, ասես, հետին պլան են մղել մշակութային կյանքը: Բայց դա՝ առաջին հայացքից. պարզվում է, որ ամռան այս շոգին բեմադրության պրեմիերա է լինում: Ահավասիկ, օգոստոսի 27-ին Կապանի քաղաքապետարանի մշակույթի մեծ դահլիճում տեղի ունեցավ լեհ հայտնի դրամատուրգ Սլավոմիր Մրոժեկի «Մեզնից մեկը» (պիեսի վերնագիրն է «Երեքը բաց ծովում») ներկայացման առաջնախաղը՝ «BBG» թատերախմբի նախաձեռնությամբ: Բեմադրության մեջ ընդգրկված էին կապանցի երիտասարդ դերասաններ՝ Կոնստանտին Կոզմանով, Թաթուլ Ծատրյան, Արկադի Լալազարյան, Հելենե Գրիգորյան:

Ժանրային առումով տրագիկոմեդիա է: Ներկայացման սյուժեի հիմքում հետեւյալ փաստն է. նավաբեկությունից հետո երեք հոգի հայտնվում են լաստանավի վրա, աստիճանաբար բոլոր ռեսուրսները սպառվում են, նաեւ սնունդը, բոլորի խոհերն ու ձգտումներն ուտելիք հայթայթելու շուրջ է, ինչը յուրաքանչյուրը ջանում է անել հօգուտ իրեն: Ի վերջո որոշում են ուտել իրենցից մեկին: Ամբողջ ներկայացումը «պտտվում» է այդ նպատակի շուրջ: Բայց խոսքը մարդուն ֆիզիկական ուտելու մասին չէ: Սա ընդամենը մետաֆորա է: Խոսքն այն մասին է, թե նորմալ մարդն ինչպես է հայտնվում մի միջավայրում եւ նրան ինչպես են ոչնչացնում՝ զրկելով բանականությունից:

*«Ներկայացումը բոլորիս մասին է, որի միջոցով փորձել ենք մեր ասելիքն ու անհանգստությունները փոխանցել հանդիսականին»*, - բեմադրությունից առաջ ասաց ներկայացման բեմադրիչ Իշխան Ղարիբյանը: Եվ, իրոք, մեր կյանքի որոշ հարցերի պատասխանը կա ներկայացման մեջ. անդրադարձ կա նաեւ քաղաքական ընտրություններին:

Ներկայացման հանդիսականների թվում էր Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնի գեղարվեստական ղեկավար, Հայաստանի թատերական գործիչների միության նախագահ Հակոբ Ղազանչյանը, ով բեմադրության մասին իր տպավորությունները ներկայացրեց «Այունյաց երկրին». *«Ներկայացումը դիտելու համար եկա Կապան, բեմադրիչը՝ Իշխան Ղարիբյանն իմ աշակերտն է, գլխավոր դերասանը՝ Կոնստանտին Կոզմանովը, մեր թատրոնի դերասաններից է: Ինձ համար հետաքրքիր էր, թե ինչ են արել: Հրաշալի ներկայացում է ստացվել, անկեղծ ասած՝ չէի սպասում: Ճիշտ փոխհարաբերությունների վրա էր արված բեմադրությունը, հետաքրքիր մտահղացման շրջանակում էր արված: Ցավում եմ, որ այս դահլիճում կայացավ առաջնախաղը: Չորս տարուց ավելի, երբ Կապանի թատրոնն էի ղեկավարում, այս դահլիճում ենք ներկայացումներ բեմադրել, պիտի ասեմ, որ սա թատերային դահլիճ չէ: Ժամանակին կառուցվել եւ նախատեսվել է ժողովների, կոնֆերանսների, համագումարների համար: Ակուստիկան չափազանց վատ է, տեսը, բեմական խոսքը երբեմն տեղ չէին հասնում, բայց դա ոչ թե դերասանների, այլ դահլիճի թերությունն էր: Մանավանդ սկսնակ, երիտասարդ դերասանների համար դժվար է խաղալ նման դահլիճում: Երբեմն էլ բարձր երաժշտությունն էր խանգարում տեսը տեղ հասնելուն: Այս բեմադրությունն իդեալական կլիներ 150 տեղանոց դահլիճում բեմադրելու դեպքում: Ինչեւէ, այն, ինչ արված էր, հետաքրքիր էր արված, ուրախ եմ եւ տպավորված»:*

Բեմադրությունն իրականացրել էր Իշխան Ղարիբյանը, բեմական շարժումը՝ Աղուն Հովհաննիսյանի: Ի.Ղարիբյանը Հայաստանի ժողովրդական արտիստ, թատրոնի եւ կինոյի ճանաչված դերասան Իշխան Ղարիբյանի թոռն է: Երբ ասում եմ, որ պապը հայտնի դերասան էր, պատասխանում է, թե ջանում է հետ չմնալ նրանից, չգիտի միայն, թե ինչքան է դա իրեն հաջողվում: 1999-ից աշխատում է Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում՝ որպես դերասան: Դասավանդում է Երեւանի կինոյի եւ թատրոնի պետական ինստիտուտում: Բեմադրություններ է արել այլ թատրոններում, ինչպես Գորիսի Վաղարշ Վաղարշյանի անվան պետական դրամատիկական թատրոնում: Առաջին անգամ է բեմադրություն անում Կապանում. հույս ունի, որ այս մեկը վերջինը չի լինի:

Թղթակցության սկզբում նշվեց, որ բեմադրությունը նախաձեռնել եւ նրա կայացմանը մեծապես նպաստել է (BBG) «Բառբառագետ» թատերախումբը, որ միավորում է մի խումբ երիտասարդ կապանցիների, ովքեր ցանկություն եւ նպատակ ունեն աշխուժացնել քաղաքի մշակութային կյանքը:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

# ՀԱՄԼԵՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ«Տիգրանակերտի հուշարձանն արժանի չէ նման վերաբերմունքի»

էջ 1

### Արցախի Տիգրանակերտում պեղումներ սկսելու նախապատմությունը

ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի Արցախի արշավախումբը 2005 թվականից սկսած պեղումների շնորհիվ հայտնաբերել է հայոց արքա Տիգրան Մեծի (մ.թ.ա 95-55թթ.)՝ Արցախում հիմնած Տիգրանակերտ քաղաքը: Սա Տիգրանի անունով միակ բնակավայրն է, որի տեղը ճշգրտորեն բացահայտված է: Պեղումները, ինչպես եւ սպասելի էր, երեւան են բերում մեծ եւ հզոր քաղաքի կառուցապատման եւ մշակութային հարուստ կյանքի մանրամասները: Գետնի տակից վեր հանած կառույցները եւ նյութերը հավաստում են, որ Տիգրանակերտը եղել է քաղաքաշինական առաջադեմ հատակագծումով եւ շինարարական տեխնիկայով ստեղծված ընդարձակ մի բնակավայր, որը հարատեւել է մինչեւ 14-րդ դարը: Այն ամբողջովին կառուցվել է տեղական սպիտակ կրաքարից, փռվել լեռան լանջն ի վեր (արհեստական դարավանդների տեսքով) եւ ստորոտի հարթավայրում, ունեցել է հզոր պարիսպներ, ժայռափոր ջրանցքներ: Տիգրանակերտը եղել է այգիների մեջ թաղված սպիտակ քաղաք:

*«Միշտ կարծել եմ, որ Տիգրանակերտի մասին իմ պատկերացումները հեքիաթային են, նյութերը՝ աղքատիկ, եւ միայն ենթադրություններ կարելի էր անել: Այնտեղ պեղումներ իրականացնելու խնդիրը ծագեց անսպասելի»*, - խոստովանում է Համլետ Պետրոսյանը: Երբ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը հայտարարեց, որ արցախցիները եկվոր են, եւ իբր փաստերը ցույց են տալիս, որ 19-րդ դարում ռուսներն են Իրանից եւ Թուրքիայից հայերին այստեղ բնակեցրել, այդ փաստը հերքելու ապացույցներ գտնելու անհրաժեշտություն առաջացավ: *«2005թ. սկսվեցին աշխատանքները, երբ պեղումներ էի իրականացնում Շուշիում: «Երկիր» հայրենադարձության եւ հիմնավորման հկ-ների միության նախագահ Սեւակ Արծրունու առաջարկով սկսեցինք աշխատանքները, որոնց նպատակն այն էր, որ նախեւառաջ ադրբեջանցիներին ապացուցենք, որ սա նրանց պատմական հողը չէ: Սեւակ Արծրունու աջակցությամբ, այդ կազմակերպության ֆինանսավորմամբ սկսեցինք աշխատանքները: Նախ՝ ուսումնասիրեցի պատմական աղբյուրները, այնուհետեւ, հավաքելով Հայաստանի լավագույն հնագետներին, եկանք Արցախ՝ Խաչենագետի Ներքնահովտի հուշարձաններն ուսումնասիրելու, - պատմեց արշավախմբի ղեկավարը՝ հավելելով. - Մեր բախտը բերեց, եւ գտանք հայոց արքա Տիգրան Բ Մեծի (մ.թ.ա. 95-55թթ.)՝ Արցախում հիմնած Տիգրանակերտ քաղաքը: Ի դեպ, այստեղ նշեմ ֆենոմենալ ժայռափոր ջրանցքի մասին, որ, իմ կարծիքով, նույնիսկ ուրարտական ժամանակաշրջանի հետքեր ունի, Խաչենագետից թեքվում է Տիգրանակերտ, ու էլ հետքեր չկան»*: Ի հավելումն նշենք, որ ադրբեջանցիները գրեթե 20 տարի այստեղ աշխատել են, այս տարածքում բանտ է եղել, որ ստեղծվել է կրաքարի հայտնի հանքերը շահագործելու նպատակով: Մինչ օրս հանքերի մնացորդները երեւում են եւ լրիվ ավերել են:

Հնագիտական արշավախմբի աշխատանքները, ինչպես արդեն նշեցինք, ղեկավարում է Համլետ Պետրոսյանը: Արշավախմբի մշտական կազմի մեջ են Արցախի պետական համալսարանի պատմության ամբիոնի վարիչ, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ Վարդգես Սաֆարյանը, Երեւանի ճարտարապետաշինարարական համալսարանի պրոֆեսոր Լյուբա Կիրակոսյանը, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմ. գիտ. թեկնածու Տատյանա Վարդանեսովան, Արմավիրի հնագիտական արշավախմբի ղեկավար Ինես Կարապետյանը, հնագետներ Արմինե Գաբրիելյանը, Նժդեհ Երանյանը, Ռուբեն Հովսեփյանը, ճարտարապետ Լիլիթ Մինասյանը:

Տիգրանակերտի հետազոտություններին մասնակցություն են ունեցել նաեւ Հայաստանի պատմության թանգարանի դրամագիտության բաժնի վարիչ, պատմ. գիտ. թեկնածու Ռուբեն Վարդանյանը, Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի Հին հնագիտության բաժնի վարիչ, պատմ. գիտ. թեկնածու Ժորես Խաչատրյանը, նույն ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Փիլիպոսյանը, նույն ինստիտուտի գիտաշխատող, պատմ. գիտ. թեկնածու Աղավնի Ժամկոչյանը, հնագետներ Նորա Ենգիբարյանը, Հայկ Հակոբյանը, Հասմիկ Մարգարյանը: Քարայրային-պաշտամունքային համալիրի հունարեն արձանագրություններն ուսումնասիրելու նպատակով արշավախմբի աշխատանքներին մասնակցել է Լեչեի համալսարանի (Իտալիա) Հռոմի պատմության պրոֆեսոր, հայագետ Ջուստո Տրաինան, հնաբուսաբան Ռոման Հովսեփյանը, հայտնի ֆրանսիացի մարդաբան Պոլ Բեյլին, Ֆլորենցիայի համալսարանի հնագետներ եւ այլք: *«Մի խոսքով՝ սա լուրջ մասնագիտական կազմ է, եւ նրանցից յուրաքանչյուրն իր ներդրումն ունի կատարված եւ կատարվող աշխատանքներում»*, - նշեց Համլետ Պետրոսյանը:

Մինչ 2008թ. հնագիտական աշխատանքների ֆինանսավորումն իրականացրել է «Երկիր» հայրենադարձության եւ հիմնավորման հկ-ների միությունը (նախագահ՝ Սեւակ Արծրունի), իսկ 2008թ.-ից՝ Արցախի Հանրապետության կառավարությունը: *«Ֆինանսավորման համար, իհարկե, շատ շնորհակալ ենք, բայց պետք է փաստեմ, որ ֆինանսավորումը համեստ է, ինչի հետեւանքով մեր աշխատանքների տեմպը դանդաղում է: Այսօրվա դրությամբ պեղել ենք հուշարձանի տարածքի միայն 3-4 տոկոսը, ինչն ավելի շատ եզրակացություններ անելու հնարավորություն չի տալիս: Մինչեւ հիմա չենք հասցրել բացել մուտքը. հայերեն արձանագրություն, վաղ քրիստոնեական ժամանակաշրջանի երկու եկեղեցի ենք բացել, մեկ սկավառակ ենք գտել, որին հայերեն գրված է. «Ես Վաչագան ծառայ Տիառն աստծո». Այս շարքը կարելի է շարունակել: Տարեկան 17 մլն դրամ ֆինանսավորմամբ ամեն տարի կարող ենք պեղել ընդամենը 1000 քառ. մետր տարածք. սա այն դեպքում, երբ հուշարձանի ընդհանուր տարածքը զբաղեցնում է 70 հա: Այս հուշարձանն արժանի չէ նման վերաբերմունքի: Համոզված եմ՝ եթե այն լիներ մեր հարեւան երկրներից մեկում, համաշխարհային բրենդ կդառնար: Այսօր սա հայերի ներկայությունն այս տարածաշրջանում ապացուցող ամենազորեղ փաստարկն է, ուրիշ նմանը գոյություն չունի»*, - իր մտահոգությունն է հայտնում արշավախմբի ղեկավարը:

### Պատմական աղբյուրները

*«Այս տարածքը մոտավորապես համապատասխանում է պատմական Արցախի Մեծ Իրանք գավառին, որ որոշ տեղերում հիշատակվում է Մեծառանք կամ Մեծարանից գավառ, որ հայտնի է Սուրբ Հակոբա վանքով՝ որպես վաղ միջնադարյան կարեւոր հոգեւոր կենտրոն մինչ Գանձասարի վանական համալիրի կառուցումը: Դա եղել է եպիսկոպոսանիստ գավառ, եւ ենթադրություններ կան, որ այն հաճախ կոչվել է Տիգրանակերտի գավառ, եւ ըստ էության Պարտավի մերձակայքն ու Մեծիրանքն առանձնացել են այս գծով (Տիգրանակերտը եղել է սահմանային բնակավայր)»*, - պարզաբանեց Համլետ Պետրոսյանը:

Արցախի Տիգրանակերտի ճշգրիտ տեղադրության ապացուցման համար ամենահիմնական հիշատակությունը հանդիպում է 7-րդ դարի պատմիչ Սեբեոսի «Պատմութիւն Հերակլի» աշխատության մեջ: Այն հիմնական ու օբյեկտիվ փաստարկ է համարվում, քանի որ ոչ մի կերպ չի նկարագրել Տիգրան Մեծի թագավորությունը, ժամանակաշրջանն ու գործունեությունը: Նա նկարագրել է Բյուզանդիայի կայսր Հերակլի 622-624թթ. պարսիկների դեմ արշավանքները:

Սեբեոսը պատմում է, որ այդ պատերազմի դրվագներից մեկում բյուզանդական կայսրն իրեն հետապնդող պարսիկներից խույս տալու նպատակով փորձում է Սյունիքից անցնել Վրաստան, սակայն պարսկական մի զորաբանակ, Գարդմանի կողմից դեպի հարթավայր իջնելով, կտրում է նրա ճանապարհը մյուս Տիգրանակերտի մոտ: Կայսրը փորձում է հետ դառնալ եկած ճանապարհով, բայց այս անգամ էլ նրան հանդիման դուրս է գալիս մի ուրիշ զորախումբ՝ արդեն Տիգրանակերտ ավանի մոտ: Այսպիսով, Սեբեոսը հիշատակում է երկու Տիգրանակերտ, որոնցից մյուս Տիգրանակերտը գտնվում էր հյուսիսում, իսկ Տիգրանակերտ ավանը՝ հարավում: Ավելի քան հավանական է, որ հեղինակը Տիգրանակերտերից մեկը մյուս է կոչում՝ այն Տիգրանակերտ ավանից տարբերելու համար: Ինչ վերաբերում է ավան տերմինին, Սեբեոսի աշխատությունում այն որպես կանոն օգտագործվում է նշանակելու ամրացված բնակավայրը՝ որը մի դեպքում կարող է լինել շուրջանակի պարսպապատված, իսկ մի այլ դեպքում՝ ամրոցին կից կամ նրա շուրջ փռված: Այս տեղեկությունները բացարձակապես արժանահավատ են, քանի որ հեղինակն այս բնակավայրերը հիշատակում է Տիգրան Մեծի եւ նրա ժամանակի հետ որեւէ կապ չունեցող դեպքերի նկարագրության ժամանակ, որպես Հերակլի զորաշարժի կետեր: Սեբեոսի վկայությունից արվող ամենաանմիջական եզրակացությունն այն է, որ 7-րդ դարի սկզբներին Արցախում եւ Ուտիքում կային Տիգրանակերտ անունով երկու բնակավայր: Եթե նկատի ունենանք, որ կայսեր բանակը շտապ Վիրք հասնելու համար պիտի գնար բանուկ ճանապարհով, ապա ավելի քան հավանական է, որ Տիգրանակերտերը գտնվել են արցախյան լեռների ու Ուտիքի հարթավայրի ծուլման եզրով դեպի հյուսիս գնացող ճանապարհից ոչ այնքան հեռու կամ նույնիսկ նրա անմիջական մերձակայքում:

Ըստ Մովսես Կաղանկատվացու՝ Հերակլի բանակը դեպի Տփղիս իր ճանապարհին սկզբում դադար էր առել Տրտու (այժմ՝ Թարթառ) գետից հարավ ձգվող հեղեղատի ափին՝ Կաղանկատույք գյուղի մոտ, ապա հենց Տրտուի հեղեղատին կից՝ Դյուտական գյուղի մոտ: Կաղանկատվացու այս եւ մի քանի այլ տեղեկությունների քննությամբ կարելի է պարզել, որ Սեբեոսի հիշատակած Տիգրանակերտերից հարավայինը՝ Տիգրանակերտ ավանը, գտնվում էր Թարթառից հարավ, Պարտավից ոչ այնքան հեռու, այնտեղ, որտեղ արցախյան լեռներն ավարտվում են, եւ սկսվում է Ուտիքի տափաստանային հատվածը: Թեեւ Մովսես Կաղանկատվացին իր պատմության այս մասում որեւէ Տիգրանակերտ չի հիշատակում, սակայն 8-րդ դարի սկզբներին հայոց Եղիա կաթողիկոսի՝ Պարտավում հրավիրած ժողովի մասին թղթում, որը ներառված է եւ Կաղանկատվացու անունով հայտնի Պատմության մեջ, տեղեկություն կա այն մասին, որ այդ ժողովին ի շարս այլոց մասնակցում էին նաեւ Կաղանկատույքի վանական Դավիթը եւ Տկռակերտի վանական (տվյալ դեպքում ուղղակի՝ քահանա) Պետրոսը: Նախ՝ կարելի է ենթադրել, որ Տկռակերտը Տիգրանակերտի տեղական արտասանությունն է, երկրորդ՝ հավանական է, որ այն այնքան էլ հեռու չէր Կաղանկատույքից (քանի որ հիշատակվում է նրանից անմիջապես հետո)՝ այսինքն՝ խոսքը նորից Տիգրանակերտ ավանի կամ Արցախի Տիգրանակերտի մասին է: Այս ժամանակ Տիգրանակերտի՝ կարեւոր բնակավայր լինելու հանգամանքը հավաստվում է նաեւ այն փաստով, որ հենց բնակավայրից մի քանի հարյուր մետր հեռու՝ լեռան գագաթին, 7-րդ դարի վերջերին կառուցվել է խաչաձեւ կենտրոնագմբեթ տաճար: Տիգրանակերտի կենտրոնական թաղամասի պեղումները երեւան են բերել 5-6-րդ դարերում կառուցված բազիլիկ եկեղեցու մնացորդները: Կարծում ենք, որ Պետրոսը հենց այս եկեղեցու քահանան էր:

Խաչենի իշխանության զորեղացման շրջանում՝ 12-13-րդ դարերում, երբ Հասան Ջալալի տիրապետության սահմանները հասնում էին մինչեւ Կուր գետ, Խաչենագետի Ներքնահովտի նախալեռնային եւ հարթավայրային հատվածը՝ Տիգրանակերտ ավանի անունով, կոչվում էր Տիգրանակերտ: Խաչենագետի վերին հոսանքի վտակներից մեկի մոտ գտնվող Կոշիկ անապատի 13-րդ դարի մի արձանագրության մեջ հիշատակվում է Տիգրանակերտի երկիրը, որտեղից եկած մի ոմն Հակոբ նվիրատվություն էր արել վանքին:

Այդ ժամանակ Տիգրանակերտը խոշոր բնակավայր էր, վկայում են կենտրոնական թաղամասի 2006-2007թթ. հետախուզական պեղումները, որոնք երեւան են բերել 12-13-րդ դարերին պատկանող հարուստ քաղաքային մշակույթ:

Արցախի Տիգրանակերտի մասին ընդհուպ մինչեւ 18-րդ դարի կեսերը, ցավոք, այլ տեղեկություններ չկան: 18-րդ դարի կեսերին այստեղ բխող Շահբուլաղ կոչվող աղբյուրների կողքին ամրոց է կառուցում Արցախի մելիքությունների կատաղի թշնամի Փանահը: Ընդ որում՝ ամրոցի առաջին շարքերը շարվում են 5-6-րդ դարերի բազիլիկ եկեղեցուց բարբարոսաբար պոկված սրբատաշ քարերով, որի շքեղ ավերակները դեռ կանգուն էին: Սակայն այդ ամրոցը շուտով ավերվում է Արցախի մելիքների կողմից:

Այսօր կանգուն է Շահբուլաղի ամրոց-դղյակը, որտեղ գործում է Տիգրանակերտի հնագիտական թանգարանը, որի երեք սրահում ներկայացված են Արցախի հնագիտական արշավախմբի պեղումներով հայտնաբերված տարբեր դարաշրջանների գտածոներ՝ սկսած մ.թ.ա. 1-ին դարից:

Շահբուլաղի հետ կապված իր դիտարկումն արեց Համլետ Պետրոսյանը՝ մասնավորապես նշելով. «*Մեր հայագիտական միտքը բավականին ճկուն չէ եւ երբեմն սխալներ է թույլ տալիս՝ կապված նաեւ այս ամրոցի հետ: Փանահը (18-րդ դար) եղել է թուրք ցեղախմբի առաջնորդ, ով, զանազան հանգամանքներով պայմանավորված, բավականին ուժ եւ հարստություն է կուտակել, բայց նա խոսել է պարսկերեն, պալատական վարք ու բարք եղել է պարսկական: Այն ժամանակ դավանաբանական, մշակութային կողմնորոշումը միանշանակ պարսկական շիական մշակույթն էր: Եթե նա որեւէ բան էր կառուցում, ապա միայն ու միայն պարսկական չափանիշներով: Այստեղ խնդիրն այն չէ, որ եթե ասում ենք Փանահն ամրոց է կառուցել, ապա այն ադրբեջանցիների մշակույթին պետք է վերագրել: Սա միանշանակ սխալ մոտեցում է, եւ Փանահն ինչ կառուցել է, տվյալ ժամանակաշրջանում ընդունված պարսկական չափանիշներին համապատասխան է արել: Ինչպես օրինակ՝ Շուշիի բերդի դեպքում, որ պարսկական չափանիշներով է կառուցված, բայց 80 տոկոս հայկական մշակույթին համապատասխան: Այստեղ որեւէ այլ խնդիր չկա»:*

«*Հիմա նոր աղբյուրներ էլ եմ գտել. Եսայի Հասան Ջալալյան կաթողիկոսի օրագրում կա մի արձանագրություն, որ Տիգրանակերտից է, որ այժմ կոչվում է Շահբուլաղ: Կաթողիկոսը բերում է եւս մեկ արձանագրության օրինակ՝ Վանխասարի եկեղեցուց, որում գրված է. «Սա է գիր Տիգրանակերտու, որ այժմ ասի Շահբուլաղ»,* - նշեց արշավախմբի ղեկավարը:

## Ո՞ր Տիգրանակերտն է

Համլետ Պետրոսյանի տեղեկացմամբ՝ թե քանի Տիգրանակերտ ենք ունեցել, հայոց պատմության մեջ նման հարց չի քննարկվում: Դինաստիական անուններով քաղաքների անվանումն ընդհանուր երեւույթ էր Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների արդյունքում առաջացած հելլենիստական աշխարհում: Օրինակ՝ հելլենիստական միապետների անուններով կոչվել են բազմաթիվ Ալեքսանդրիաներ, Սելեւկիաներ, Անտիոքներ: Հայաստանում էլ մինչեւ Տիգրան Մեծ արքաների անուններով ստեղծվել են Երվանդաշատ, Երվանդակերտ, Արտաշատ քաղաքները, մի քանի Զարեհավաններ ու Զարիշատներ: Այս ավանդույթը շատ ավելի մեծ թափ ստացավ Տիգրան Մեծի օրոք, քանի որ նրա հսկայածավալ նվաճումները հարստության, աշխատուժի եւ սինոյկիսմոսի (համաբնակեցում) ավելի մեծ հնարավորություններ էին ստեղծում: Բացի Աղձնիքում հիմնած Տիգրանակերտ հանրահայտ մայրաքաղաքից, որի մասին հիացմունքով են խոսում հունահռոմեական մի շարք պատմիչներ (Ստրաբոն, Ապպիանոս, Պլուտարքոս)՝ պատմական Հայաստանում եւ նրա սահմաններից դուրս Տիգրանի անունով մի շարք այլ բնակավայրեր էլ են հայտնի: Օրինակ՝ Գողթնում հիմնվել է Տիգրանակերտ ավանը, Մարաստանում՝ Տիգրանա բնակավայրը, Ամանոսում՝ Տիգրանուկոմեն: Հարկ է նկատել նաեւ, որ այդ բնակավայրերից եւ ոչ մեկի, ներառյալ եւ մայրաքաղաք Տիգրանակերտի ճշգրիտ տեղադրությունը, հայտնի չէ: «*Տիգրանակերտ անունով մեզ հայտնի է 7-8 բնակավայր, բայց կարող ենք ենթադրել, որ այդ անունով տասնյակ բնակավայրեր են եղել: Ասել, թե քանի Տիգրանակերտ ենք ունեցել, պատմագիտորեն սխալ կլինի: Մեզ պատմականորեն հայտնի է 7-8 բնակավայր, ընդ որում՝ նույնիսկ Տիգրանակերտ մայրաքաղաքի հետ կապված մի քանի տիգրանակերտների մասին է խոսքը: Այսօրվա դրությամբ Տիգրանակերտ մայրաքաղաքի տեղը հնագիտորեն ապացուցված չէ: Այսօր միակ հնագիտորեն ապացուցված ճշգրիտ տեղադրությունն Արցախի Տիգրանակերտինն է, - նշեց Հ.Պետրոսյանը՝ հավելելով. - Տիգրանակերտը հայտնաբերել նշանակում է ցույց տալ նյութական մշակույթի այն մնացորդները, որոնք պատկանում են Տիգրանակերտի ժամանակաշրջանին: Մեր հայտնագործությունը հանգեց նրան, որ մեզ հաջողվեց տարածքում գտնել Տիգրան Մեծի ժամանակաշրջանին պատկանող հզոր քաղաքի մնացորդները, որ որեւէ մեկը մինչ մեզ չէր վավերացրել»:*

Արշավախմբի ղեկավարի խոսքով՝ երբ առաջին անգամ եկան այս տարածք, տեսան կտրտված ժայռեր: Ժամանակին Յան Պոլսկին, որ հայտնի ակադեմիկոս է, ազգությամբ հրեա, Ադրբեջանի ակադեմիայի անդամ եւ ստեղծել է Աղվանից տեսությունը, որի համաձայն՝ աղվաններն ադրբեջանցիների նախնիներն են, մի հոդված է գրել Վանքասարի եկեղեցու մասին, որտեղ նշում է, որ այն աղվանական է՝ չնայած շեշտելով վարպետների նշանների՝ զգալի մասի հայերեն տառեր լինելու փաստը, որ նույնական են Սիսիանի 7-րդ դարի տաճարի նշաններին: Ըստ այդ հոդվածի՝ եկեղեցին այնքան կարեւոր է եղել, որ ուխտավորների համար ճանապարհ են բացել: «*Քանի որ Յան Պոլսկին ժայռերի փորվածքները համարել է ճանապարհ, հետագայում ադրբեջանցի հնագետները, ովքեր վերականգնել են Փանահի ամրոցը, բավականին շատ հող են փորել, հարթեցրել, շատ նյութեր հանել, բայց ուշադրություն չեն դարձրել, քանի որ իրենց ակադեմիկն ասել է, որ այն ճանապարհ է, - նշում է Համլետ Պետրոսյանը: - Երբ մենք այդ կտրվածքները, որ համարվել է ճանապարհ, ուսումնասիրեցինք, պարզվեց, որ դրանք պարսպի հետքեր են, ինչն ադրբեջանցիները չեն հասկացել»*: Այդ պարսպի շարվածքը հատուկ տեխնիկա ունի, որ հելլենիստական դասական շարվածք է, ինչպիսին են օրինակ՝ Արտաշատի, Հին Մցխեթայի պարիսպները: Այդ շարվածքի մասին Փիլոն Բյուզանդացին հատուկ տրակտատ է գրել. «*Այսինքն՝ դա զուտ արցախյան կամ դասական հայկական ձեւ չէ, այլ՝ դասական հելլենիստական, որ հայերը մշակել են: Այդ նորմերին համապատասխան է կառուցվել տվյալ ժամանակաշրջանի պարսկական ամբողջ Արեւելքը: Երբ հասկացանք, որ պարսպի հետքեր են, պեղեցինք եւ գտանք այդ շրջանում տարածված գունազարդ խեցեղեն (միագույն՝ վրան կարմիր, դարչնագույն, երբեմն սեւ ներկեր), որ թվագրվում է հստակ ժամանակաշրջանի, այն է՝ մ.թ.ա. 1-ին դարից մինչեւ մ.թ. 2-րդ դար: Սա մեզ թույլ է տալիս վստահաբար ասել, որ այստեղ եղել է Տիգրանի ժամանակի հզոր ամրոց՝ համապատասխան նյութերով, որ մինչ մեզ ոչ ոք չէր հայտնաբերել: Այնուհետեւ գտանք անհիկ այլ թաղամասեր եւս, հետո՝ վաղքրիստոնեական թաղամաս, ի վերջո պարզեցինք, որ քաղաքը մինչ 13-րդ դարի կեսերը գոյատեւել է եւ զբաղեցրել 70 հա տարածք»:*

Հարցին, թե աշխարհին որքանով է հետաքրքրում Տիգրանակերտ հուշարձանը, Համլետ Պետրոսյանը պատասխանեց. «*Աշխարհն արձագանքում է այնքանով, որքանով հուշարձանը հետաքրքրում է գիտական շրջանակներին եւ ասել, որ քաղաքական շրջանակներին եւս հետաքրքրում է, ճիշտ չի լինի*»: Մարսելում կատարված անալիզների շնորհիվ հաստատվեց, որ հայտնաբերված երկու եկեղեցին կառուցվել է 5-րդ դարի վերջին եւ 6-րդ դարի սկզբին Վաչագան Բարեպաշտի բարեփոխումների ժամանակ, ինչպես եւ կարծում էին հնագետները: «*Մեկուկես տարի չարչարվեցի, մինչեւ գտա 840 եվրո այդ անալիզներն անելու համար: Հիմա Մարսելում նյութեր կան, որոնց ուսումնասիրության համար համապատասխան գումար չկա»,* - նշեց Հ.Պետրոսյանը: Այս տարիներին արշավախմբի ղեկավարը տարբեր երկրներում հանդես է եկել զեկուցումներով այն չափով, որքանով կարողացել է ուրիշների գիտական հետաքրքրություններին համահունչ լինել. «*Ակադեմիզմը չի սիրում հայրենասիրություն»:*

Արշավախմբի ղեկավարի փոխանցմամբ՝ պեղումների ընթացքում հայտնաբերված բոլոր գտածոներն էլ արժեքավոր են. անտիկ գունազարդ, միջնադարյան ջնարակապատ խեցեղենի բեկորների, ճարտարապետական մանր դետալների, ապակյա ապարանջանների ամենաշքեղ հավաքածուն Տիգրանակետն է տալիս, հունարեն, վաղ քրիստոնեական շրջանի եւ այլ արձանագրություններ, պարսպապատերի կվադրերի համար նախատեսված ժայռափոր ժապավեններ, հարթակներ ու կիսաշրջան, լիաշրջան եւ ուղղանկյուն աշտարակների հիմքեր. ծիծեռնակապոչ կապեր… «*Նախաքրիստոնեական շրջանի հայերեն հստակ արձանագրություններ դեռեւս չենք հայտնաբերել, բայց ակնկալում ենք մուտքը բացելիս գտնել: Հատկապես պարիսպների շարվածքը վկայում է վարպետների առանձնահատուկ տաղանդի մասին. պեղումներին զուգահեռ նաեւ սովորում ենք*», - նշեց Համլետ Պետրոսյանը:

ПОЛИМЕТАЛЛ

# «ՊոլիԱրմ» ՍՊԸ-ն տեղեկացնում է

«Պոլիմետալ» խմբի «ՊոլիԱրմ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) սույնով հայտնում է 2017-2020թթ. ընթացքում ՀՀ Սյունիքի մարզում երկրաբանահետախուզական աշխատանքներ իրականացնելու մտադրության մասին: Աշխատանքներն իրականացվելու են այն տարածքային սահմաններում, որտեղ նախկինում երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման իրավունք է ունեցել «Պոլիմետալ» խմբի «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ-ն եւ նպատակ ունեն վերհանելու Կապանի լեռնահարստացման կոմբինատի աշխատանքի շարունակականության եւ տարածաշրջանում լեռնահանքային ոլորտի զարգացման հեռանկարները:

Երկրաբանահետախուզական աշխատանքներին ձեռնամուխ լինելուց առաջ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով 2017թ. օգոստոս-նոյեմբեր ժամանակահատվածում կիրականացվեն շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատում եւ փորձաքննություն, որոնց շրջանակներում կապահովվի աշխատանքների եւ փորձաքննության գործընթացի վերաբերյալ հանրային ծանուցում, կիրապարակվեն աշխատանքների վերաբերյալ փաստաթղթերը, եւ կկազմակերպվի հանրային քննարկում: Ընկերությունը հայտարարում է, որ ապահովելու է իր գործունեության պատշաճ տեղեկատվական թափանցիկություն եւ աշխատանքների նկատմամբ հանրային վերահսկողության հնարավորություն: Աշխատանքներն իրականացվելու են ինչպես ՀՀ օրենսդրությամբ սահմանված, այնպես էլ ոլորտի նկատմամբ կիրառելի առաջադեմ միջազգային պահանջներին ու չափորոշիչներին համապատասխան՝ շրջակա բնական, սոցիալ-տնտեսական եւ պատմամշակութային միջավայրի վրա անցանկալի ազդեցությունները նվազագույնի հասցնելու նպատակով:

«Պոլիմետալը» ոսկի եւ արծաթ արդյունահանող առաջատար ընկերություններից է Ռուսաստանում, Ղազախստանում եւ Հայաստանում: Հիմնադրվել է 1998թ.: Ունի երկրաբանահետախուզական աշխատանքների, լեռնահանքային խոշոր ձեռնարկությունների նախագծման, կառուցման եւ շահագործման հանձնելու 19 տարվա փորձ:

«Պոլիմետալը» սկսել է Հայաստանում գործունեությունը 2015թ.՝ ձեռք բերելով Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրի նկատմամբ ընդերքօգտագործման իրավունք ունեցող «Լիճքվազ» ՓԲԸ-ի բաժնետոմսերը: Ստորգետնյա հանքը շահագործման հանձնելուց հետո Լիճքվազ-Թեյի հանքավայրից տարեկան նախատեսվում է արդյունահանել 300 հազ. տոննա հանքաքար: Հանքաքարը վերամշակվելու է Կապանի լեռնահարստացման կոմբինատում, որն ընկերությունը ձեռք է բերել 2016թ. ապրիլին: Կոմբինատը ներառում է տարեկան 400 հազ. տոննա արտադրողականությամբ ստորգետնյա հանքը, տարեկան 1 մլն տոննա նախագծային հզորությամբ վերամշակող ֆաբրիկան եւ ենթակառուցվածքային օբյեկտներ:

«Պոլիմետալի» ռազմավարությանը համապատասխան՝ Կապանի ԼՀԿ հենքի վրա կստեղծվի այլ հանքավայրերից հումքի վերամշակման տարածաշրջանային կենտրոն:

Սոցիալական պատասխանատվության ծրագրերի շրջանակներում 2016թ. սոցիալ-տնտեսական համագործակցության համաձայնագրեր են կնքվել Կապան եւ Մեղրի համայնքների հետ, որոնցով սահմանված սոցիալական ներդրումների ծավալը 2017թ. կգերազանցի 135 մլն ՀՀ դրամը:

«Պոլիմետալի» բնապահպանական կառավարման համակարգը հավաստագրված է Bureau Veritas Certification-ի անկախ աուդիտորների կողմից՝ ISO 14001-2004 միջազգային չափորոշիչին համապատասխան:

## Երկու կարեւոր խնդրի մասին

Ինչպես վերեւում նշեցինք, ամենակարեւոր խնդիրը ֆինանսական միջոցների սղությունն է: «Այսօրվա ամենակարեւոր խնդիրներից մեկը Տիգրանակերտի դամբարանադաշտերի հայտնաբերումն է. դրանցից որոշների տեղը գիտենք, բայց պեղումներ անելն այնքան էլ էֆեկտիվ չէ. կարող է պեղենք, գտնենք կամ էլ չգտնենք: Կա մագնիսական սկանավորման եղանակ, բայց թանկ հաճույք է. մեկ հա տարածքի՝ այդ եղանակով ուսումնասիրությունն արժե 1 մլն դրամ, մեզ անհրաժեշտ է առնվազն 150 հա տարածքի սկանավորում», - պարզաբանեց Հ.Պետրոսյանը՝ հավելելով, որ, օրինակ, Արտաշատի հայաստանյան հնագիտական արշավախմբերը համագործակցում են լեհական հայտնի հաստատությունների հետ եւ շատ խնդիրներ նրանց միջոցով լուծումներ են ստանում: «Բայց Արցախի Հանրապետության ներկա կարգավիճակով պայմանավորված՝ չենք կարողանում համագործակցել այլ երկրների համապատասխան հաստատությունների հետ: Քանի որ քաղաքականապես ճանաչված չենք, հնարավոր չէ այդ ուղղությամբ աշխատանքներ իրականացնելու համար որեւէ մեկի հետ պայմանագիր կնքել», - նշեց արշավախմբի ղեկավարը:

Հ.Պետրոսյանի փոխանցմամբ՝ հաջորդ խնդիրն Արցախի տեղական իշխանությունների հետ փոխհարաբերություններն են: «Շատ կցանկանայի, որ մեզ նման նվիրված աշխատող մարդկանց մի քիչ գնահատեին, ավելի լավ վերաբերվեին», - զրույցն ամփոփեց Համլետ Պետրոսյանը:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

1.Հայստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղը հայտարարում է 2017թ. հեռակա ուսուցմամբ բակալավրական կրթության ընդունելություն հետևյալ կրթական ծրագրերով.

| Դասիչը | Կրթական ծրագիրը | Ընդունելության քննությունները | | | Ընդունելության տեղերը, այդ թվում՝ | ԲԶ | Ուսման վարձ,դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Մրցութային | | Ոչ մրցութային | | | |
| | | | | | | | |
| | **ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղ** | | | | **70** | **7** | |
| 031101.01.6 | Տնտեսագիտություն | Մ (գ) | Ֆ (գ)** | Հլգ (գ)* | 20 | 2 | 360.000 |
| 061105.01.6 | Տեղեկատվական տեխնոլոգիաներ | Մ (գ) | Ֆ (գ)** | Հլգ (գ)* | 10 | 1 | 360.000 |
| 072401.01.6 | 072401.00.6.Լեռնային գործ և օգտակար հանածոների արդյունահանում | Մ(գ) կամ Ֆ(գ) | Ֆ(գ) **կամ Մ(գ) ** | Հլգ (գ)* | 14 | 1 | 312.000 |
| 071501.01.6 | Մետալուրգիա | Մ(գ) կամ Ֆ (գ) | Ֆ (գ)** կամ Մ(գ)** | Հլգ (գ)* | 8 | 1 | 312.000 |
| 073201.01.6 | Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն | Մ (գ) կամ Ֆ (գ) | Ֆ (գ)** կամ Մ (գ)** | Հլգ (գ)* | 8 | 1 | 312.000 |
| 072402.01.6 | Օգտակար հանածոների հարստացում | Մ (գ) կամ Ֆ (գ) | Ֆ (գ)** կամ Մ (գ)** | Հլգ (գ)* | 10 | 1 | 312.000 |

2. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղ հեռակա ուսուցմամբ կարող են ընդունվել առնվազն միջնակարգ, նախնական մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթություն ունեցող անձինք՝ առանց տարիքի սահմանափակման:
3. Դիմորդը իր ընտրությամբ կարող է հայտագրել և մասնակցել միայն մեկ բուհի ընդունելության մրցույթին՝ հանձնելով սահմանված քննությունները: Ընդունելության մրցույթը կատարում է յուրաքանչյուր բուհ՝ ըստ մասնագիտությունների, հատկացված տեղերի և միավորների:
4. Սույն կետում նշված կարգավիճակ ունեցող դիմորդները բուհ ընդունվելու դեպքում օգտվում են օրենքներով սահմանված ուսման վարձի լրիվ փոխհատուցման իրավունքից,

- 1-ին ու 2-րդ խմբերի և մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամները,
- առանց ծնողական խնամքի մնացած մինչև 23 տարեկան երեխաները:

5. Քննությունները դրական միավորներով հանձնած դիմորդներից, պետական բյուջեի միջոցների հաշվին, մրցույթից դուրս, ընդունվում են ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների երեխաները, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիները՝ համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության և ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տված տեղեկանքների:
6. Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդները քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում բուհ են ընդունվում մրցույթից դուրս, ըստ մասնագիտությունների նախարարության կողմից հաստատված տեղերի:
7. Դիմումի հետ ներկայացվում են՝

- միջնակարգ կրթության ատեստատը կամ միջին մասնագիտական կամ մասնագիտական տեխնիկական կրթության մասին փաստաթուղթը,
- 6 լուսանկար (3 x 4 սմ չափսի),
- անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, ՀՀ հատուկ անձնագիր, կացության վկայական),
- զինվորական գրքույկ կամ զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինվորական ծառայությունը անցնելու մասին,
- 4-րդ և 5-րդ կետերով սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են համապատասխան փաստաթղթեր (1-ին կամ 2-րդ խմբի և մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամության, ինչպես նաև զինծառայող ծնողի զոհվելու մասին, առանց ծնողական խնամքի մնացած լինելու մասին),
- տեղեկանք տվյալ տարվա կենտրոնացված ընդունելության քննությունների գնահատականների վերաբերյալ,
- <<Գնահատման և թեստավորման կենտրոն>> ՊՈԱԿ-ի կողմից տրված միասնական քննությունների վկայագիր:

- Առկա ուսուցման համակարգում սովորող անձինք, հեռակա ուսուցման ընդունելության մրցույթին մասնակցելու համար կարող են ներկայացնել միջնակարգ կրթության ատեստատի կրկնօրինակը՝ այն բուհի նշագրումով և կնիքով, որտեղ գտնվում է բնօրինակը:

8. Ընդունելության քննությունների փաստաթղթերը հանձնելիս դիմորդը վճարում է 1500 դրամ՝ փաստաթղթերի ընդունման և ձևակերպման համար: Քննությունների կազմակերպման և անցկացման նպատակով յուրաքանչյուր քննության համար դիմորդը վճարում է 1500 դրամ: Ընդունելության քննությունների վճարից ազատվում են սույն կանոնների 4-րդ և 5-րդ կետերով սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները: Անկախ քննությանը մասնակցելուց և արդյունքից՝ քննության համար վճարված գումարը չի վերադարձվում: Դիմորդի քննությունների ժամանակացույցը կախված չէ փաստաթղթերը հանձնելու օրից:
9. Ընդունելության քննությունները գնահատվում են 20 միավորային համակարգով: Դրական են համարվում ութ և բարձր միավորները: Մինչև ութ միավորի դեպքում գնահատականը ամբողջացվում է (կլորացվում է, օրինակ՝ 7.5 միավորը հավասարվում է 8.0 միավորի) հօգուտ դիմորդի՝ ապահովելով դրական միավորի վաստակումը: Ութից բարձր միավորները գնահատվում են տասնորդական մասի պահպանումով՝ տվյալ առարկայի գնահատման չափանիշներով սահմանված քայլերին համապատասխան: Մրցույթին մասնակցում են այն դիմորդները, ովքեր տվյալ մասնագիտության համար նախատեսված քննություններից ստացել են դրական միավորներ:

Ս.թ. սեպտեմբերի 5-ից սեպտեմբերի 25-ը ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի դիմորդների համար կազմակերպվում են անվճար կոնսուլտացիաներ «Մաթեմատիկա» և «Ֆիզիկա» առարկաների գծով:

Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են ս.թ. օգոստոսի 25-ից մինչև սեպտեմբերի 25-ը, յուրաքանչյուր օր (բացի շաբաթ և կիրակի օրերից) ժամը 10:00-ից մինչև 17:00-ը:

**ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի ընդունող հանձնաժողով՝ ք.Կապան,Բաղաբերդ 28, 3-րդ հարկ, 313 սենյակ, հեռ.՝5-34-61**

# Հրդեհ՝ ականապատված տարածքում

Ամառվա վերջին օրերին հրդեհներ արձանագրվեցին նաեւ Սյունիքի մարզում:

Օգոստոսի 24-ին «Սյունյաց երկիր» թերթի ստեղծագործական խումբը եղավ անտառային հրդեհներից մեկի տարածքում: Դա Չայզամիի հարակից գոտին է, որն «Արցախանտառ»-ին պատկանող տարածք է:

Բայց քանի որ Քաշաթաղի վարչական շրջանից, ժամանակի առումով, հրշեջ տեխնիկայի՝ հրդեհի վայր տեղափոխելն անիմաստ կլիներ, դեպքի վայր էր ժամանել Գորիսի հրշեջ փրկարարական ջոկատի մեկ մարտական հաշվարկ՝ հրամանատար Սամվել Մուսախանյանի գլխավորությամբ:

Մոտ ութ հեկտար անտառային տարածքի առանձնահատկությունն այն էր, որ տարածքն ականապատ էր, ինչը խիստ ռիսկային եւ վտանգավոր էր դարձնում հրդեհաշիջման աշխատանքը:

- Մենք չենք կարողանում լրիվ հզորությամբ աշխատել, քանի որ տարածքն ականապատ է եւ ամենափոքր անզգուշությունն անգամ կարող է փրկարարների կյանքը

խլել, - ասաց Գորիսի հրշեջ փրկարարական ջոկատի հրամանատար, փրկարար ծառայության մայոր Սամվել Մուսախանյանը:

Այդ բոլորով հանդերձ՝ փրկարարական ջոկատի խելամիտ աշխատանքի՝ մոտ յոթ ժամ տեւած համառ պայքարի շնորհիվ հրդեհաշիջման աշխատանքը ժամը 21-ի սահմաններում ավարտին հասցվեց:

Կիրակի օրը՝ օգոստոսի 27-ին, ժամը 19-ի սահմաններում, Գորիսի հրշեջ փրկարարները հանձնարարություն էին ստացել մեկնել Կապանի տարածաշրջան՝ Խուստուփի փեշերին՝ մոտ տասը հեկտար տարածքի վրա բռնկված հրդեհը մարելու աշխատանքներում կապանցի հրշեջներին օգնելու համար:

**Սեփ. լրատվություն**

# Խուստուփի լանջին բռնկված հրդեհը մեկուսացվել է

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն օգոստոսի 28-ին՝ ժամը 11:42-ին, տեղեկություն է ստացվել, որ Խուստուփ լեռան լանջին մոտ 100 հա այրված տարածքում հայտնաբերվել է հրդեհի նոր օջախ. Խուստուփ լեռից դեպի արեւմուտք այրվում է մոտ 100 քմ խոտածածկույթ:

Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ ԱԻՆ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, հրդեհաշիջման աշխատանքներին մասնակցում են 34 փրկարար ծառայող եւ «Զանգեզուր» կենսոլորտային համալիրի 30 աշխատակից:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 16:40-ին:

**28 օգոստոս, 2017**
**armenpress.am**

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1530, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 1.09.2017թ.: